Հրապարակման ենթակա չէ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ աշխատակիցների ք. Մինսկ (Բելառուսի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը՝

Ռաֆայել Գրիգորյան

Ռուզաննա Կուսիկյան

Արամ Սողոմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ՊԵԿ Մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության պետ

ՀՀ ՊԵԿ Մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության պետի տեղակալ

ՀՀ ՊԵԿ Մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության Ռիսկերի վերլուծության, հսկողության և մշտադիտարկման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մինսկ, Բելառուսի Հանրապետություն, 2024թ. փետրվարի 20-ից 23-ը

4. Հրավիրող կողմը՝

Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտե

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Մասնակցություն ԵԱՏՄ անդամ պետությունների Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային (ՄԾՄԿ) կից ռիսկերի կառավարման համակարգի զարգացման հարցերով աշխատանքային խմբի հերթական 53-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

Նիստի օրակարգի համաձայն քննարկվել են ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմիններում ռիսկերի կառավարման համակարգի զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցեր, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների ՄԾՄԿ որոշումների նախագծեր, Եվրասիական միջկառավարական խորհրդի 02.02.2024թ. թիվ 2 հանձնարարականի իրականացման եղանակները և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նիստի շրջանակներում հայկական կողմը մասնակցեց նիստի օրակարգի հարցերի քննարկմանը և ներկայացրեց ՀՀ ՊԵԿ դիրքորոշումը դրանց վերաբերյալ:

Մասնավորապես՝ նիստի շրջանակներում հայկական կողմը ներկայացրեց իր առաջարկները և դիրքորոշումները Եվրասիական միջկառավարական խորհրդի 02.02.2024թ. թիվ 2 հանձնարարականի իրականացման վերաբերյալ՝ նշելով, որ ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումների կիրառումը կարող է վերաբերել բացառապես մաքսային արժեքի մաքսային հսկողության ոլորտին: Նշված դիրքորոշումն ընդունվեց ԵԱՏՄ անդամ այլ պետությունների մաքսային ծառայությունների ներկայացուցիչների կողմից, և ձևավորվեց միասնական դիրքորոշում, որը ներկայացվելու է Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի ս.թ. մարտի 1-ին կայանալիք 45-րդ նիստին: Նույն հարցի շրջանակներում քննարկվեցին բյուջեի եկամուտների տեսանկյունից էական ապրանքների ցանկի ձևավորման հնարավոր մոտեցումները, հայկական կողմը ներկայացրեց համապատասխան դիրքորոշում, որն ընդունվեց, և համապատասխան ցանկի նախագիծը նույնպես ներկայացվելու է Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի առաջիկա նիստին՝ հաստատման նպատակով:

Մաքսային արժեքի հսկողության ուղղությամբ ՄԾՄԿ որոշումների իրականացման մշտադիտարկման (ՄԾՄԿ 28.09.2023թ. թիվ 43/6 որոշման համաձայն) հարցի շրջանակներում հայկական կողմը ներկայացրեց տվյալների շտեմարանում առկա տվյալների վերլուծության արդյունքները՝ նշելով, որ որոշման պայմանների համաձայն՝ ապրանքների ցածր մաքսային արժեքի հիմնավորման անհրաժեշտությանը բավարարող ապրանքներ 2023թ. 4-րդ եռամսյակի արդյունքներով Հայաստանի Հանրապետությունում չեն նույնականացվել:

Քննարկվեցին նաև որոշակի ռիսկի պրոֆիլների գործողության արդյունքները, և հայկական կողմը ներկայացրեց համապատասխան տեղեկատվություն ռիսկի պրոֆիլների արդյունավետության վերաբերյալ:

Նիստի շրջանակներում քննարկված տեղեկատվությունը հանդիսանում է «ծառայողական օգտագործման համար» տեղեկատվություն և հրապարակման ենթակա չէ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Մաքսային միության միավորված կոլեգիային կից ռիսկերի կառավարման համակարգի զարգացման աշխատանքային խմբի նիստի արդյունքների վերաբերյալ կազմվեց համապատասխան արձանագրություն և որոշվեց շարունակել ռիսկերի կառավարման համակարգի զարգացման աշխատանքային խմբի աշխատանքները ԵԱՏՄ անդամ պետությունների ռիսկերի կառավարման գործընթացների զարգացման ուղղությամբ: Համաձայնեցված որոշման նախագիծը և տեղեկանքը ներկայացվեցին ՄԾՄԿ քարտուղարություն՝ հետագա ընթացքն ապահովելու և ներառվեցին ս.թ. մարտի 1-ին ք. Մինսկում կայանալիք ՄԾՄԿ նիստի օրակարգում:

Աշխատանքային խմբի հաջորդ նիստը, համաձայն հերթականության, նախատեսվում է անց կացնել Ղազախստանի Հանրապետությունում 2024 թվականի 2-րդ եռամսյակում: Միևնույն ժամանակ քննարկվեց հնարավորություն, որ կարող է անհրաժեշտություն առաջանալ արտահերթ նիստն անցկացնելու ս.թ. մարտ ամսին՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի 02.02.2024թ. թիվ 2 հանձնարարականի իրագործումն ապահովելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Արձանագրությամբ ամրագրված դրույթները կիրականացվեն դրանց համար սահմանված ժամկետներում՝ մինչև Մաքսային միության միավորված կոլեգիային կից ռիսկերի կառավարման զարգացման աշխատանքային խմբի հաջորդ նիստը:

10. Ստորագրություններ՝

Ռաֆայել Գրիգորյան

Ռուզաննա Կուսիկյան

Արամ Սողոմոնյան

Ամսաթիվ՝ 28.02.2024թ.